ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ Ե-55

«08» հունիսի 2021թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Մարիամ Կարենի Գալստյանին, առ այն, որ նա, 2014 թվականի հունիսի 4-ից զբաղեցնելով Արդարադատության նախարարի հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացները համակարգող տեղեկալի օգնականի պաշտոնը, իրականացրել է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման աշխատանքներ:

Միաժամանակ, համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2014 թվականի հունիսի 26-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր և միջոցառումների ժամանակացույց մշակելու, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագիրը վերանայելու, հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ մշակելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ 170-Ա հրամանի՝ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում որպես աշխատանքային խմբի քարտուղար ներգրավված է եղել Մարիամ Գալստյանը: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում մշակվել և ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1141-Ն որոշումը:

Տրվում է ներկայացնելու Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ